

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԱԱՊՁԲ-20-2-1**

ք. Երևան

04.2020թ.

«Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատուց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի քննության և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

### **2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

### **2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ «Օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## **3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է 430000000 (չորս հարյուր երեսուն միլիոն) «՝ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է «՝ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսերին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

#### **4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

#### **5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ ՀՀ ՊՆ ՌԱԿ զինվորական ներկայացուցչության բաժնի N 17 ՁՆ կողմից տված եզրակացության հիման վրա: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պոյնտակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ պատրաստության գլխավոր վարչությունը:



9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն  
ք. Երևան Բազրևանդի 5  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011024537  
ՀՎՀՀ 02522157  
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՌԱԴՎԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ  
ՀՀ, ք. Երևան, Սիլիկյան թաղամաս 5-րդ փ. Տ.58  
«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 11500603578200  
ՀՎՀՀ 01835789  
Տնօրեն

Գ. ՄԿՐՏՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1.	Համալիր վարժասարքեր («ՀՄՄ-2 համալիր վարժասարք»)»	<p>«ՀՄՄ-2 ՀԱՄԱԼԻՐ ՎԱՐԺԱՍԱՐՔ» արտադրված Հայաստանի Հանրապետությունում, նախատեսված է ՀՄՄ-2-ի անձնակազմի՝ հրամանատարի, նշանառու-օպերատորի և մեխանիկ-վարորդի հրաձգության և մեքենավարման՝ իրականությանը առավելագույն համապատասխանող մարտա-վարական խնդիրների, առանց մոտոռետուրսի, ՎՔՆ-ի և զինամթերքի, ուսումնական դասաանելյակի պայմաններում, համատեղ ուսուցման և վարժեցման համար:</p> <p>Վարժասարքը պետք է ապահովի.</p> <ul style="list-style-type: none"> <li>-մարտական և կառավարման բաժանմունքներում տեղաբաշխված նշանառու-օպերատորի, հրամանատարի նշանառության դիտասարքերի և մեխանիկ-վարորդի մեքենայի կառավարման օրգանների ու չափիչ-ստուգիչ սարքերի ֆունկցիոնալ նշանակությունն ուսումնասիրելու հնարավորություն,</li> <li>- նշանառու-օպերատորի նշանառության հնարքների ուսուցում և վարժեցում,</li> <li>-ՀՄՄ-ի հրամանատարի և նշանառու-օպերատորի՝ մարտական բաժանմունքում տեղակայված դիտասարքերի և նշանառության սարքավորումների միջոցով, կրակային համակարգի կառավարման ուսուցում,</li> <li>- ՀՄՄ-ի հրամանատարի կողմից մարտադաշտի հետախուզման, նշանակետերի հայտնաբերման, նշանառու-օպերատորին նշանացուցում տալու, նշանառության և կրակի վարման ճշգրտումներ կատարելու ուսուցում և վարժեցում,</li> <li>-մեքենավարման և կրակային մարտավարական խնդիրների կատարման ժամանակ՝ հրամանատարի, նշանառու-օպերատորի և մեխանիկ վարորդի միջև փոխհամաձայնեցված գործողությունների ուսուցում և վարժեցում,</li> <li>- մեքենավարման և հրաձգության դասընթացներին համապատասխան՝ նախապատրաստական, ստուգարքային և ստուգողական վարժությունների ուսուցում և վարժեցում,</li> <li>- տարբեր եղանակներով՝ ՀՄՄ-ի շարժիչի գործարկման ուսուցում և վարժեցում,</li> <li>- վարժահրապարակի եռաչափ մոդելի վրա մեքենավարման բոլոր էլեմենտների՝ այդ թվում տեղից շարժվելու, կանգառի, վերընթաց և վարընթաց տեղաշարժման, բնական և արհեստական արգելքների հաղթահարման կանոնների և հնարքների ուսուցում ու վարժեցում,</li> <li>- մեքենավարման և հրաձգության դասընթացներին համապատասխան՝ ուսուցանվող անձնակազմի կողմից կատարված վարժությունների ավտոմատ գնահատում:</li> </ul> <p>ՀՄՄ-2 համալիր վարժասարքի լրակազմն իր մեջ պետք է ներառի՝</p> <p><i>Հրահանգչի մոդուլ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>- հրահանգչի համակարգչային բլոկ -1 հատ</li> <li>- հրամանատարի համակարգչային բլոկ -1 հատ</li> <li>- նշանառու օպերատորի համակարգչային բլոկ -1 հատ</li> <li>- մեխանիկ վարորդի համակարգչային բլոկ -1 հատ</li> <li>- հոսանքի անխափան սնուցման սարք -1 հատ</li> <li>- ապարատային պահարան -1 հատ</li> <li>- միկրոֆոն-1 հատ</li> <li>- դինամիկ հարթակի կառավարման վահանակ -2 հատ</li> <li>- մոնիտոր -5 հատ</li> <li>- կառավարման վահանակ -1 հատ</li> <li>- տափիչ -1 հատ</li> <li>- բարձրախոս -2 հատ</li> </ul> <p><i>Մարտական բաժանմունքի մոդուլ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>- դինամիկ հարթակ -1 հատ</li> </ul> <p><i>Հրամանավարի մոդուլ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>- մոնիտոր -3 հատ</li> <li>- TKH-3B սարքի իմիտատոր-1 հատ</li> <li>- P-123 M սարքի իմիտատոր -1 հատ</li> <li>- 1Մ3 նշանոցի իմիտատոր -1 հատ</li> <li>- Կայունարարի կառավարման վահանակ -1 հատ</li> <li>- БП-34 սարքի իմիտատոր -1 հատ</li> <li>- Աշտարակի կանգունակ -1 հատ</li> <li>- Դիտարկման սարք ТНРО-170А -2 հատ</li> </ul>

- Ճշգրտումների պոտոնցիոմետր -1 հատ
- Հրամանատարի նստատեղ -1 հատ
- Ներքին լուսավորման պլաֆոն ՍՄԵ-71 -1 հատ
- Հավացուցիչ -1 հատ
- MT2 սարք -1 հատ
- Շլեմֆոն-1 հատ

*Նշանառու օպերատորի մոդուլ*

- Մոնիտոր -3 հատ
- БПК- 1-42 նշանոցի իմիտատոր -1 հատ
- Աշտարակի կանգունակ -1 հատ
- Կայունարարի կառավարման վահանակ -1 հատ
- КР-60 սարքի իմիտատոր -1 հատ
- Թնդանոթի վերելքի սարքի իմիտատոր -1 հատ
- Աշտարակի շրջադարձի սարքի իմիտատոր -1 հատ
- Ազիմուտային ցուցիչ -1 հատ
- БУ-25-2 С կառավարման բլոկի իմիտատոր -1 հատ
- Դիտարկման սարք ТНПО-170 А -3 հատ
- Մոնոմետր -1 հատ
- 9 Ш 119 М1 սարքի իմիտատոր -1 հատ
- ՀՏԿ-ի կառավարման վահանակ -1 հատ
- БВ-35 սարքի իմիտատոր -1 հատ
- Ներքին լուսավորման պլաֆոն ՍՄԵ -1 հատ
- Նժանառու օպերատորի նստատեղ -1 հատ
- Ճշգրտումների ներմուծման սարք -1 հատ
- Կառավարման վահանակ 902 -1 հատ
- MT2 սարք -1 հատ
- Շլեմֆոն -1 հատ

*Կառավարման մոդուլ*

- Դինամիկ հարթակ -1 հատ
- Մոնիտոր -3 հատ
- Հովացուցիչ -1 հատ
- Մանոմետր -1 հատ
- ППК -59 սարքի իմիտատոր -1 հատ
- Դիտարկման սարք ТНПО-170 А -3 հատ
- Ներքին լուսավորման պլաֆոն ՍՄԵ-71 -1 հատ
- ТВНЕ-1П սարք -1 հատ
- БВ37 սարքի իմիտատոր -1 հատ
- Օդամղիչ սարք -1 հատ
- Ոտնակ П П Т -1 հատ
- Ոտնակ ПС -1 հատ
- Ոտնակ ПТ-1 հատ
- ПРХР սարքի իմիտատոր -1 հատ
- Հովացման մեխանիզմ -1 հատ
- Կանգառման արգելակի համակարգ -1 հատ
- Ճանապարհային ազդանշանի վահանակ -1 հատ
- Ղեկ փոխանցման սարքերով -2 հատ
- Վարորդի նստատեղ -1 հատ
- Վառելիքային ծորակ -1 հատ
- КР-55 սարքի իմիտատոր -1 հատ
- Կոնդենսատի հեռացման ծորակ -1 հատ
- MT 2 սարք -1 հատ
- Շլեմֆոն -1 հատ
- Մեխանիկ վարորդի ստուգիչ սարքերի վահանակ -1 հատ

*Տեխնիկական պահանջները*

ՀՄԱ-2-ի համալիր վարժասարքն իրենից ներկայացնում է ապարատա-ծրագրային համալիր, որի ֆունկցիոնալ գործարկումը իրականացնում է.

- Ուսուցանվող անձնակազմերի հրահանգավորում մարտական մեքենաների վարման և հրաձգության դասընթաներին համապատասխան
- Եռաչափ վարժաիրապարակում լեռնային և հարթավայրային տեղանքներում անձնակազմի կողմից կատարվող կրակային և մեքենավարման մարտավարական խնդիրների իրականացում մեքենավարման ուսումնական և ստուգողական

		<p>վարժությունների համապատասխանեցում մարտական մեքենաների վարման դասընթացի պահանջներին</p> <ul style="list-style-type: none"> <li>- Տարվա եղանակի ընտրություն ամառ-ձմեռ</li> <li>- Օրվա ժամանակահատվածի ընտրություն գիշեր-ցերեկ</li> <li>- Շրջակա միջավայրի օդի ջերմաստիճանի ընտրություն</li> <li>- Մթնոլորտային տեղումների և երևույթների ընտրություն քամի, անձրև, ձյուն, մառախուղ և այլն</li> <li>- Մետեո բալիստիկ պայմանների ընտրություն</li> <li>- Բոլոր իմիտատորների ֆունկցիոնալ համապատասխանեցում իրական սարքերի աշխատանքային ալգորիթմներին</li> <li>- ՀՄՄ-ում տեղակայված սարքերի և սարքավորումների աշխատանքային ձայների ամբողջական վերարտադրություն</li> <li>- Թիրախների հեռավորության չափում՝ հեռաչափ և նշանառու սարքերի սանդղակների միջոցով</li> <li>- Անձնակազմի բոլոր անդամների համար մարտադաշտի եռաչափ վիզուալիզացիա</li> <li>- Տարբեր հեռավորությունների և անկյան տակ գտնվող կողմնորոշիչներ և թիրախներ՝ հրամանատարի հետախուզական աշխատանքների իրականացման համար</li> <li>- Հրաձգության համար անհրաժեշտ շարժվող և անշարժ թիրախների (հետևակ, տանկ ՀՄՄ, զրահամեքենա, ավտոմոբիլ, ուղղաթիռ և այլն) ընտրություն՝ իրականացվող վարժության դասընթացային պայմաններին համապատասխան</li> <li>- Դեպի թիրախները արձակված արկերի և փամփուշտների հետագծային և խոցման վիզուալ էֆեկտների իրականացում</li> <li>- Հրահանգչի կողմից՝ անձնակազմի գործողությունների, սարքերի և ցուցիչների աշխատանքի լիարժեք վերահսկողություն և ներքին կապի միջոցով համապատասխան հրահանգների իրականացում</li> <li>- Անձնակազմի կողմից իրականացված վարժության ավտոմատ գնահատում և փաստաթղթավորում տպիչի միջոցով: Կոնստրուկցիոն պահանջները Համալիր վարժասարքը կոնստրուկցիոն առումով պետք է ապահովի.</li> <li>- Մարտական բաժանմունքի կառավարման օրգանների և իմիտատորների աշխատանքային դիապազոնները՝ ՀՄՄ-2-ում տեղակայված սարքավորումների ելակետային դիրքերին համապատասխան,</li> <li>- Կառավարման մոդուլում տեղակայված ոտնակների, բռնակների աշխատանքային դիապազոնները՝ ՀՄՄ-2-ում տեղակայված սարքավորումների ելակետային դիրքերին համապատասխան,</li> <li>- Երկկողմանի կապ հրահանգչի և անձնակազմի միջև,</li> <li>- Կառավարման մոդուլը դինամիկ հարթակի միջոցով՝ լանդաֆտին համապատասխան տատանումներ,</li> <li>- ՀՄՄ-2-ի հրամանատարի, նշանառու-օպերատորի և մեխանիկ-վարորդի մոդուլների միմյանցից անկախ աշխատանք, Շահագործողական պահանջները Համալիր վարժասարքը շահագործողական առումով պետք է բավարարի հետևյալ պայմաններին.</li> <li>- Էլեկտրասնուցումը՝ 220Վ +10%, 50 ± 1 Հց, - 15</li> <li>- Շրջակա միջավայրի ջերմաստիճանը՝ +10-ից +40°C,</li> <li>- Հարաբերական խոնավությունը՝ 55-ից 80 %;</li> <li>- Մեկնարկը՝ միացնելուց հետո՝ 7-ից 10 րոպե,</li> <li>- Անընդմեջ աշխատանք՝ 6 ժամ,</li> <li>- Դադար 6 ժամ աշխատելուց հետո՝ 2 ժամ,</li> <li>- Երաշխիքային ծառայության ժամկետը՝ 2 տարի,</li> <li>- Ծառայության ժամկետը՝ 7 տարի:</li> </ul>
2.	Համալիր վարժասարքեր (ՀՄՄ-2 մեխանիկ վարորդի վարժասարք)	<p>Արտադրված Հայաստանի Հանրապետությունում, նախատեսված է ՀՄՄ2 մեխանիկ-վարորդի մեքենավարման՝ իրականությանը առավելագույն համապատասխանող մեքենավարման խնդիրների, առանց մոտոռեսուրսի, ՎՔՆ-ի, ուսումնական դասասենյակի պայմաններում ուսուցման և վարժեցման համար:</p> <p>Վարժասարքը պետք է ապահովի.</p> <ul style="list-style-type: none"> <li>- ՀՄՄ2 Կառավարման բաժանմունքում տեղաբաշխված մեխանիկ-վարորդի մեքենայի կառավարման օրգանների ու չափիչ-ստուգիչ սարքերի ֆունկցիոնալ նշանակությունն ուսումնասիրելու հնարավորություն,</li> <li>- մեքենավարման դասընթացներին համապատասխան՝ նախապատրաստական, ստուգարձային և ստուգողական վարժությունների ուսուցում և վարժեցում,</li> </ul>

- տարբեր եղանակներով՝ շարժիչի գործարկման ուսուցում և վարժեցում,
- վարժահրապարակի եռաչափ մոդելի վրա մեքենավարման բոլոր էլեմենտների՝ այդ թվում տեղից շարժվելու, կանգառի, վերընթաց և վարընթաց տեղաշարժման, բնական և արհեստական արգելքների հաղթահարման կանոնների և հնարքների ուսուցում ու վարժեցում,
- Մեքենավարման դասընթացներին համապատասխան՝ ուսուցանվող անձնակազմի կողմից կատարված վարժությունների ավտոմատ գնահատում:

**Լրակազմը և տեխնիկական պահանջները**

**Հրահանգչի մոդուլ**

- Հրահանգչի համակարգչային բլոկ - 1 հատ,
- Մեխանիկ վարորդի համակարգչային բլոկ -1 հատ,
- Հոսանքի կարգավորման սարք-1 հատ,
- Հոսանքի անխափան սնուցման սարք-1 հատ,
- Ապարատային պահարան -1 հատ,
- Միկրոֆոն -1 հատ,
- Դինամիկ հարթակի կառավարման վահանակ -1 հատ,
- Մոնիտոր - 3 հատ,
- Ստեղնաշար -1 հատ,
- Տպիչ -1 հատ,
- Բարձրախոս-1 հատ:

**Կառավարման մոդուլ**

- Խցիկ-1 հատ,
- Դինամիկ հարթակ-1 հատ,
- Մոնիտոր-3 հատ,
- Հովացուցիչ-1 հատ,
- Մանոմետր-1 հատ
- Օդային բալոնի իմիտատոր -1 հատ,
- ԲՊԿ-59 սարքի իմիտատոր-1 հատ
- Դիտարկման սարք ԴՊՕ -170A-3 հատ,
- Ներքին լուսավորման պլաֆոն-1 հատ
- ԵԲ37 սարքի իմիտատոր- 1հատ,
- Ուտնակ ոտ -1 հատ,
- Ուտնակ ու -1 հատ,
- Ուտնակ ու -1 հատ,
- ՈՔՔՔ սարքի իմիտատոր -1 հատ,
- Հովացման մեխանիզմ-1 հատ,
- Կանգառման արգելակի համակարգ-1 հատ,
- Ճանապարհային ազդանշանի վահանակ-1 հատ,
- Ղեկ փոխանցման սարքերով-1 հատ
- Վարորդի նստատեղ - 1 հատ,
- Վառելիքային ծորակ- 1 հատ,
- ԿՔ55 սարքի իմիտատոր -1 հատ,
- Մեխանիկ վարորդի ստուգիչ սարքերի վահանակ-1 հատ,
- Կոնդենսատի հեռացման ծորակ - 1 հատ
- ՄՏ2 սարք- 1 հատ,
- Շլեմֆոն- 1 հատ:

**Տեխնիկական պահանջները**

վարժասարքն իրենից ներկայացնում է ապարատա-ծրագրային համալիր, որի ֆունկցիոնալ գործարկումը իրականացնում է.

- Ուսուցանվող անձնակազմերի հրահանգավորում՝ մարտական մեքենաների վարման դասընթացներին համապատասխան
- Եռաչափ վարժահրապարակում լեռնային և հարթավարային տեղանքներում անձնակազմի մեքենավարման մարտավարական խնդիրների իրականացում
- մեքենավարման ուսումնական և ստուգողական վարժությունների համապատասխանեցում մարտական մեքենաների վարման դասընթացի պահանջներին
- Տարվա եղանակի ընտրություն ամառ-ձմեռ
- Օրվա ժամանակահատվածի ընտրության գիշեր-ցերեկ
- Շրջակա միջավայրի օդի ջերմաստիճանի ընտրություն
- Մթնոլորտային տեղումների և երևույթների ընտրություն քամի, անձրև, ձյուն, մառախուղ և այլն
- Մետեո բալիստիկ պայմանների ընտրություն

		<ul style="list-style-type: none"> <li>• Իմիտատորների ֆունկցիոնալ համապատասխանեցում իրական սարքերի և սարքավորումների աշխատանքային ճայների ամբողջական վերարտադրություն</li> <li>• վարժաիրապարակի եռաչափ վիզալիզացիա</li> <li>• Հրահանգչի կողմից՝ անձնակազմի գործողությունների, սարքերի և ցուցիչների աշխատանքի վերահսկողության և ներքին կապի միջոցով համապատասխան հրահանգների իրականացում</li> <li>• Անձնակազմի կողմից իրականացված վարժության ավտոմատ գնահատում և փաստաթղթավորում տպիչի միջոցով:</li> </ul> <p><u>Կոնստրուկցիոն պահանջները</u></p> <p>Վարժասարքը կոնստրուկցիոն առումով պետք է ապահովի.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Կառավարման մոդուլում տեղակայված ոտնակների, բռնակների աշխատանքային դիապազոնները՝ ՀՄՄ2 տեղակայված սարքավորումների Ելակետային դիրքերին համապատասխան.</li> <li>• Երկկողմանի կապ Հրահանգչի և անձնակազմի միջև,</li> <li>• Կառավարման մոդուլի դինամիկ հարթակի միջոցով՝ լանդշաֆտին համապատասխան տատանումներ,</li> </ul> <p><u>Դինամիկ հարթակը բնութագրվում է.</u></p> <ul style="list-style-type: none"> <li>- Շարժիչների տիպը - ասինխրոն</li> <li>- Շարժիչների կառավարումը - ասինխրոն ըստ դիրքի և արագության հաճախականության</li> <li>- Տանգաժի անկյունը - +/- 20Ե</li> <li>- Թեքման անկյանը - +/- 20Ե</li> <li>- Ուղղահայաց տեղաշարժ - +/- 150մմ</li> <li>- Անկյունային տեղաշարժ - 0 - 20Ե</li> <li>- Հզորությունը մինչև - 4 ԿՅԷ,</li> <li>- Կոմունիկացիոն մալուխների նշագրում</li> <li>- Ուսուցանող, ուսուցանվող և սպասարկող անձնակազմի անվտանգություն:</li> </ul> <p><u>Շահագործման պահանջները</u></p> <p>Վարժասարքը շահագործման առումով պետք է բավարարի հետևյալ պայմաններին.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Էլեկտրասնուցումը՝ 220Վ +10%, 50 Հց,</li> <li>- Շրջակա միջավայրի ջերմաստիճանը՝ +10-ից +40ԵՇ.</li> <li>- Հարաբերական խոնավությունը՝ 55-ից 80 %;</li> <li>- Մեկնարկը՝ միացնելուց հետո՝ 7-ից 10 րոպե,</li> <li>- Անընդմեջ աշխատանք՝ 6 ժամ.</li> <li>- Դադար 6 ժամ աշխատելուց հետո՝ 2 ժամ,</li> <li>- Երաշխիքային ծառայության ժամկետը՝ 2 տարի,</li> <li>- Ծառայության ժամկետը՝ 8 տարի:</li> </ul>
3.	<p>Համալիր վարժասարքեր (S-72 տանկի մեխանիկ վարորդի վարժասարք)</p>	<p>Արտադրված Հայաստանի Հանրապետությունում, նախատեսված է S-72 տանկի մեխանիկ-վարորդի մեքենավարման՝ իրականությանը առավելագույն համապատասխանող մեքենավարման խնդիրների, առանց մոտոտեսարսի, ՎՔՆ-ի, ուսումնական դասասենյակի պայմաններում ուսուցման և վարժեցման համար:</p> <p><u>Վարժասարքը պետք է ապահովի.</u></p> <ul style="list-style-type: none"> <li>- S-72 տանկի Կառավարման բաժանմունքում տեղաբաշխված մեխանիկ-վարորդի մեքենայի կառավարման օրգանների ու չափիչ-սազիչ սարքերի ֆունկցիոնալ նշանակությունն ուսումնասիրելու հնարավորություն,</li> <li>- մեքենավարման դասընթացներին համապատասխան՝ նախապատրաստական, ստուգարքային և ստուգողական վարժությունների ուսուցում և վարժեցում,</li> <li>- տարբեր եղանակներով՝ տանկի շարժիչի գործարկման ուսուցում և վարժեցում,</li> <li>- վարժաիրապարակի եռաչափ մոդելի վրա մեքենավարման բոլոր էլեմենտների՝ այդ թվում տեղից շարժվելու, կանգառի, վերընթաց և վարընթաց տեղաշարժման, բնական և արհեստական արգելքների հաղթահարման կանոնների և հնարքների ուսուցում ու վարժեցում,</li> <li>- Մեքենավարման դասընթացներին համապատասխան՝ ուսուցանվող անձնակազմի կողմից կատարված վարժությունների ավտոմատ գնահատում:</li> </ul> <p>Լրակազմը և տեխնիկական պահանջները</p> <p><u>Հրահանգչի մոդուլ</u></p> <ul style="list-style-type: none"> <li>- Հրահանգչի համակարգչային բլոկ - 1 հատ,</li> <li>- Մեխանիկ վարորդի համակարգչային բլոկ -1 հատ,</li> <li>- Հոսանքի կարգավորման սարք-1 հատ,</li> <li>- Հոսանքի անխափան սնուցման սարք-1 հատ,</li> <li>- Ապարատային պահարան -1 հատ,</li> <li>- Միկրոֆոն -1 հատ,</li> </ul>

- Դինամիկ հարթակի կառավարման վահանակ -1 հատ,
- Մոնիտոր - 3 հատ,
- Ստեղնաշար -1 հատ,
- Տպիչ -1 հատ,
- Բարձրախոս-1 հատ:

Կառավարման մոդուլ

- Խցիկ-1 հատ,
- Դինամիկ հարթակ-1 հատ,
- Մոնիտոր-1 հատ,
- Մանոմետր-1 հատ
- Հովացուցիչ-1 հատ,
- Օդային բալոնի իմիտատոր -2 հատ,
- Մարտկոցների անջատիչ-1 հատ,
- Փոխանցման սարք-1 հատ,
- 5B37 սարքի իմիտատոր- 1հատ,
- Օդամղիչ սարք-1 հատ,
- Ունակ ոոտ -1 հատ,
- Ունակ ու -1 հատ,
- Ունակ ու -1 հատ,
- Վթարային լուսարձակիչ-1 հատ,
- Մեխանիկ վարորդի ստուգիչ սարքերի վահանակ-1 հատ,
- Դիտարկման սարք ԽՈՍ -168B-1 հատ,
- Հովացման մեխանիզմ-1 հատ,
- Կանգառման արգելակի համակարգ-1 հատ,
- Ճանապարհային ազդանշանի վահանակ-1 հատ,
- Վահանակ ոՅ -76-1 հատ,
- Շրջադարձի բռնակ -2 հատ,
- Վարորդի նստատեղ - 1 հատ,
- Վառելիքային ծորակ- 1 հատ,
- PHM սարքի իմիտատոր- 1 հատ,
- Ներքին լուսավորման պլաֆոն-1 հատ
- MT2 սարք- 1 հատ,
- Շլեմֆոն- 1 հատ:

Տեխնիկական պահանջները

Վարժասարքն իրենից ներկայացնում է ապարատա-ծրագրային համալիր, որի ֆունկցիոնալ գործարկումը իրականացնում է.

- Ուսուցանվող անձնակազմերի հրահանգավորում մարտական մեքենաների վարման դասընթացներին համապատասխան
- Եռաչափ վարժահրապարակում լեռնային և հարթավարային տեղանքներում անձնակազմի մեքենավարման մարտավարական խնդիրների իրականացում
- մեքենակարման ուսումնական և ստուգողական վարժությունների համապատասխանեցում մարտական մեքենաների վարման դասընթացի պահանջներին
- Տարվա եղանակի ընտրություն ամառ-ձմեռ
- Օրվա ժամանակահատվածի ընտրության գիշեր-ցերեկ
- Շրջակա միջավայրի օդի ջերմաստիճանի ընտրություն
- Մթնոլորտային տեղումների և երևույթների ընտրություն քամի, անձրև, ձյուն, մառախուղ և այլն
- Մետեո բայիստիկ պայմանների ընտրություն
- Իմիտատորների ֆունկցիոնալ համապատասխանեցում իրական սարքերի և սարքավորումների աշխատանքային ծայների ամբողջական վերարտադրություն
- վարժահրապարակի եռաչափ վիզալիզացիա
- Հրահանգչի կողմից՝ անձնակազմի գործողությունների, սարքերի և ցուցիչների աշխատանքի վերահսկողության և ներքին կապի միջոցով համապատասխան հրահանգների իրականացում
- Անձնակազմի կողմից իրականացված վարժության ավտոմատ գնահատում և փաստաթղթավորում տպիչի միջոցով:

Կոնստրուկցիոն պահանջները

Վարժասարքը կոնստրուկցիոն առումով պետք է ապահովի.

- Կառավարման մոդուլում տեղակայված ոտնակների, բռնակների աշխատանքային դիապազոնները՝ S-72 տանկում տեղակայված սարքավորումների Ելակետային դիրքերին համապատասխան.

		<ul style="list-style-type: none"> <li>• Երկկողմանի կապ Հրահանգչի և անձնակազմի միջև,</li> <li>• Կառավարման մոդուլի դինամիկ հարթակի միջոցով՝ լանդշաֆտին համապատասխան տատանումներ,</li> </ul> <p><u>Դինամիկ հարթակը բնութագրվում է.</u></p> <ul style="list-style-type: none"> <li>-Շարժիչների տիպը - ասինխրոն</li> <li>-Շարժիչների կառավարումը - ասինխրոն ըստ դիրքի և արագության հաճախականության</li> <li>-Տանգաժի անկյունը - +/- 20°</li> <li>-Թեքման անկյանը - +/- 20°</li> <li>-Ուղղահայաց տեղաշարժ - +/- 150մմ</li> <li>-Անկյունային տեղաշարժ - 0 - 20°</li> <li>-Հզորությունը մինչև - 4 կՅԷ,</li> <li>- Կոմունիկացիոն մալուխների նշագրում</li> <li>- Ուսուցանող, ուսուցանվող և սպասարկող անձնակազմի անվտանգություն:</li> </ul> <p><u>Շահագործման պահանջները</u></p> <p>Համալիր վարժասարքը շահագործման առումով պետք է բավարարի հետևյալ պայմաններին.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Էլեկտրասնուցումը՝ 220Վ +10%, 50 Հց,</li> <li>- Շրջակա միջավայրի ջերմաստիճանը՝ +10-ից +40°С.</li> <li>- Հարաբերական խոնավությունը՝ 55-ից 80 %;</li> <li>- Մեկնարկը՝ միացնելուց հետո՝ 7-ից 10 րոպե,</li> <li>- Անընդմեջ աշխատանք՝ 6 ժամ.</li> <li>- Դադար 6 ժամ աշխատելուց հետո՝ 2 ժամ,</li> <li>- Երաշխիքային ծառայության ժամկետը՝ 2 տարի,</li> <li>- Ծառայության ժամկետը՝ 8 տարի:</li> </ul>	
--	--	--	--

Ծանոթություն՝

Տեղափոխումը և տեղադրումը մատակարար կազմակերպության միջոցներով՝ ՊԳ վարչության հայտի համաձայն ներկայացված զորամասերում: Վարժասարքը պետք է լինի նոր և չօգտագործված: Նշված ապրանքները հանդիսանում են հիմնական միջոցներ և համարվում են ընդունված (հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է) փորձարկումից և շահագործողի կողմից ընդունելուց հետո:

Ապրանքը պետք է մակնշված լինի համաձայն կոնստրուկտորական փաստաթղթերի:

**ԳՆՈՐԴ**



«Արաբիկա-հայկական հարաբերությունների կարգավորման կոմիտեի» նախարարություն


«ԱՐԱՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ

Տնօրեն

  
 Գ. ԿԿՐՏՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Հ դրամ

Չ/Հ	Ապրանքների անվանումները՝	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Մեկ միավորի գինը	Ընդհանուր գումարը	2020թ. 2-րդ եռամսյակ	2020թ. 3-րդ եռամսյակ
1	Համալիր վարժասարքեր («ՀԱՄ-2 համալիր վարժասարք»)	լրակազմ	1	100000000	100000000	1	
1	Համալիր վարժասարքեր (S-72 տանկի մեխանիկ վարորդի վարժասարք)	լրակազմ	3	60000000	180000000	2	1
3	Համալիր վարժասարքեր (ՀԱՄ-2 մեխանիկ վարորդի վարժասարք)	լրակազմ	3	50000000	150000000	1	2

Հավելված N 2  
N ՄԱԱՊՁԲ-20-2-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Հ դրամ

Գնման առարկայի										
Չ/Հ	անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում								
		ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Համալիր վարժասարքեր («ՀԱՄ-2 համալիր վարժասարք»)	100000000	100000000	100000000	100000000	100000000	100000000	100000000	100000000	100000000
2	Համալիր վարժասարքեր (ՀԱՄ-2 մեխանիկ վարորդի վարժասարք)	60000000	60000000	60000000	180000000	180000000	180000000	180000000	180000000	180000000
3	Համալիր վարժասարքեր (S-72 տանկի մեխանիկ վարորդի վարժասարք)	50000000	50000000	50000000	150000000	150000000	150000000	150000000	150000000	150000000

CPV 1-ին չափաբաժին 37491000/1, 2-րդ չափաբաժին 37491000/2, 3-րդ չափաբաժին 37491000/3

ԳՆՈՐԴ



«Հ պաշտպանության նախարարություն

«Հ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

ՎԱՃԱՌՈՂ

«Ռադվան Տեխնոլոգիա» ՍՊԸ

Տնօրեն



Պայմանագրի կողմ  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 գտնվելու վայրը \_\_\_\_\_  
 հհ \_\_\_\_\_  
 հվհհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «    » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «    » «    » 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «    » 20 թ. դուրս գրված N \_\_\_\_\_ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

Մատակարարված ապրանքների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

Ապրանքը ընդունեց

\_\_\_\_\_ ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 Կ.Տ.

\_\_\_\_\_ ստորագրություն  
 \_\_\_\_\_  
 ազգանուն, անուն  
 Կ.Տ.

ԱԿՏ N \_\_\_\_\_

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ \_\_\_\_\_-ի (այսուհետ՝ Գնորդ) և \_\_\_\_\_

Գնորդի անվանումը

Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. \_\_\_\_\_-ին կնքված N \_\_\_\_\_

պայմանագրի կնքման ամսաթիվը

պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. \_\_\_\_\_-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

\_\_\_\_\_

ազգանուն, անուն

\_\_\_\_\_

Ստորագրություն

\_\_\_\_\_

ստորագրություն



# ԱՐՏՈՆԱԳԻՐ

№ 291 Ս

Հայաստանի Հանրապետության  
Արտախոր սեփականության գործադիրությունը  
օրենքի համաձայն գրից  
Տանկի համալիր վարժառայր  
օգտակար սողնի առյժ առյուռնագիրը

ԱՐՏՈՆԱԳՐԱՏԵՐ

«ՈՍՏՎԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԿ» ՍՊԸ

ՀԵԳԻՆԱԳՐԱՏԵՐ

Ա. Աղաջան

ՀՅՏԻ №

AM20110149U

Որոշումը կնքված է

28.10.2011

Օգտակար սողնի առյժնությունը

28.10.2011

Գրանցված է Հանրային  
գրանցումային կոմիտեում

25.05.2012

Գործադիրության պետ

Արտախոր սեփականության գործադիրությունը Հայաստանի Հանրապետության Արտախոր սեփականության գործադիրությունում



# ԱՐՏՈՆԱԳԻՐ

№ 434 Ս

Հայաստանի Հանրապետության մտավոր  
սեփականության գործակալությունը  
օրենքի համաձայն տվեց

**ՀՄՍ-2-ի համալիր վարժասարք**

օգտակար մոդելի սույն արտոնագիրը

**ԱՐՏՈՆԱԳՐԱՏԵՐ**

«Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ

**ՀԵՂԻՆԱԿ(ՆԵՐ)**

Ռադիկ Վանիկի Վանունց

ՀԱՅՏԻ №

AM20150018U

Ներկայացման թվականը

24.02.2015

Օգտակար մոդելի  
առաջնությունը

24.02.2015

Գրանցված է պետական  
գրանցամատյանում

25.12.2015

Գործակալության պետ

ՀՀ Կոնստիտուցիոնալ դատարանի կողմից հաստատված և օրենքով սահմանված կարգով գործադրվող փոփոխությունները համապատասխանաբար կատարվում են: